

ԱՐԺԵՔԱՎՈՐ ԶԵՌԱԳՐԵՐ

Անցյալ դարավերջին Պոլսում հայտարարված է եղել Սահակ-Մեսրոպյան մրցանակաբաշխություն, որի նպատակը, ինչպես ցույց են տալիս այս ձեռագիր աշխատությունները և դրանց առաջարկներում տեղ գտած ակնարկությունները, եղել է բարբառագիտական-հայագիտական ուսումնասիրությունների իմի հավաքումը:

Այդ մրցանակաբաշխությանը ներկայացված ձեռագիր աշխատությունների լուսատիպ-նմանահանությունները իրավունք են տալիս դրական խոսք ասել այն ծառայության մասին, որը մրցանակաբաշխությունը մատուցել է հայագիտությանը ընդհանրապես և հայ բարբառագիտությանը՝ մասնավորապես:

Իրևանի Վ. Մ. Մուրտուզի անվան յլետհամալսարանի գրադարանում պահվող այդ լուսատիպ-նմանահանությունները, որոնց թիվը երեք տասնյակի է հասնում, մեծ մասամբ բարբառագիտական ուսումնասիրություններ և բարբառային բառարաններ են:

Որոշ ձեռագրեր էլ, ինչպես կերևա նկարագրության հետագա ընթացքում, դուրս գալով բարբառագիտական-լեզվաբանական հարցերի շրջանակներից, մեծ արժեք և հետաքրքրություն կարող են ներկայացնել պատմաբանի, ազգագրագետի, ինչպես նաև բանահավաքի համար:

Աշխատությունների հեղինակների գերակշիռ մասը ուսուցիչներ են. նրանք տասնամյակներ շարունակ, բարբառախոս հայրի միջավայրում ուսուցչությամբ զբաղվելով, ուսումնասիրել են այդ բարբառները:

Գրեթե բոլոր ձեռագրերի համար հատկանշական են մանրակրկիտությունը, սերը դեպի գործը, այն անթերի ներկայացնելու ձգտումը, որոնք անշուշտ գնահատելի են ու անհրաժեշտ նման գործի ձեռնարկող ամեն մի մարդու համար: Սակայն, առաջին իսկ ծանոթությունից պարզ է դառնում, որ լեզվաբանական գիտելիքների ոչ բավարար լինելը որոշ չափով իջեցրել է ձեռագրերի գիտական-լեզվաբանական արժեքը:

Հիմնական թերությունը, որը բավական դժվար է դարձնում ուսումնասիրությունների, ինչպես նաև բառարանների օգտագործման հարցը, այն է, որ նրանցում, գրեթե առանց բացառության, անտեսված է գիտական տուժադարձությունը, իսկ այն հանգամանքը, որ վերոհիշյալ ձեռագրերի հեղինակների ճշող մեծամասնությունը արևմտահայեր են, իր ազդեցությունն է ունեցել գործերի վրա. շնայած այն հանգամանքին, որ զանազան, իրարից մեծ տարբերություններ ունեցող բարբառների է վերաբերում խոսքը, այնուամենայնիվ, ամենուրեք իշխում է արևմտահայերենին հատուկ հնչյունական սիստեմը:

Մշո բարբառի բառարանում տեղ գտած բոլոր բառերի բառասկզբի խուլ պայթականները ձայնեղացված են, մի հանդամանք, որը հատուկ չէ բարբառի հնչյունափոխությանը. ճիշտ նույն ձևով բառամիջում ձայնեղները խլացված են:

Անշուշտ ձեռագրերից օգտվելը ավելի դյուրին կլինի տվյալ բարբառին ծանոթ մարդու համար, հակառակ պարագայում անհրաժեշտ է մեծ զգուշավորություն:

Բավարարվելով ձեռագրերի ընդհանուր նկարագրի մասին այսքան ասելով՝ անցնենք դրանցից յուրաքանչյուրի կոնկրետ բնութագրմանը:

Այս աշխատությունների նյութ են դարձել Վանի, Պոլսի, Խարբերդի, Ղարաբաղի, Համշենի, էվերեկ-Ճենեսի, Մելիտիների (Մալաթիա), Քղի, Բաղեշի, Մշո, Տերենտի բարբառները:

Ամենից ընդարձակ և հանգամանալից ներկայացված է Պոլսի բարբառը: Ոչ անհայտ հեղինակը՝ Խնդդիկը մրցանակաբաշխությանն է ներկայացրել երկու գիրք և վեց մեծածավալ ալբոմ, որոնց էջերի թիվը անցնում է երկու հազարից: Աշխատությունը վերնագրված է «Պոլսի Հայեվաբ» (1906—1907):

Այստեղ հեղինակը տալիս է «Ժողովրդական բառեր» իրենց բազմաթիվ առումներով ու հոմանիշներով, կենդանիների, բույսերի, հանքային նյութերի անուններ, ասացվածքներ, առածներ, մաղթանքներ, անեծքներ, կատակներ, նախատական խոսքեր և այլն:

Հեղինակը, բարբառին հատուկ քերականական գիտողություններ անելուց բացի, տալիս է բարբառի համեմատությունը դրաբարի, այլ բարբառների, արևելյան լեզվի և եվրոպական լեզուների հետ:

Առանձնապես հետաքրքրական է բառարանը, որը չափազանց հարուստ է և մեծ նյութ կարող է տալ ինչպես լեզվաբանին, այնպես և բանահավաքին ու ազգագրագետին: Բառարանում հավաքված բազմաթիվ ասույթների, տոհմների ու առածների մեջ իրենց արտացոլում են գտել բարբառախոսների սովորույթները, նրանց կենցաղն ու ապրելակերպի առանձնահատկությունները: Նույնիսկ մեծածավալ հայագետ Հր. Աճառյանի Պոլսի բարբառին նվիրված մեծաթեք աշխատության առկայության դեպքում էլ վերոհիշյալ ձեռագիրը չի արժեքազրկվում:

Ձեռագիր աշխատություններից չորսը վերաբերում են Վանի բարրառին. դրանք հետևյալներն են.

«Քերականություն Վանայ դավառաբարառի» (1906—1907):

Միսաք Տեվկանցի՝ «Տարեւ Գավառաբարառներու ի Վասպուրական» (1902), Մոտ 250 էջից բաղկացած այս աշխատությունը ընդգրկում է երեք հազարից ավելի բառ ու ոճ, որոնցից շատերը, ինչպես երևում է առաջին իսկ ծանոթությունից, չկան մեր տպագիր բառարաններում:

Նույնը կարելի է ասել այս բարրառին վերաբերող երրորդ՝ Մանվել Անանյանի՝ «Վանեցոց առանձնահատուկ բառեր, ոճեր և առումներ» ձեռագրի մասին:

Այս բարրառին վերաբերող չորրորդ ձեռագիրը՝ Խ. Հեռյանի՝ երկու մասից բաղկացած աշխատությունն է հետևյալ վերնագրով՝ «Բանալի պապենի բարբառներու. այսինքն բառարան, ֆերականություն և հնարանություն, հայրայրեալ Վանայ գավառաբարառներեն և ժողովրդական խաղերեն» (Վան, 1905): Ավելի քան երկու հարյուր էջից բաղկացած այս աշխատության յուրաքանչյուր էջը ամփոփում է երկու, երբեմն էլ երեք տասնյակ բառ: Հաճախ այս կամ այն բառի կողքին հեղինակը նշում է դրա գործածության տեղը:

Գ. Կ. Դանելյանի՝ «Խաբրերդի գավառաբարառանը»¹, որը հիմնականում բացատրական բնույթ ունի, ընդգրկում է մոտ 1400 բառ և ոճ: Այստեղ գավառական բառերի կողքին տեղ են գտել գրաբար, ընդհանուր հայերեն բառեր, ինչպես՝ դատիլ, տանիլ, էշ, դիմացկուն, քերխալ, տիլ, տակ և այլն, որոնք տվյալ դեպքում որևէ հետաքրքրություն չեն ներկայացնում և բառարանը օգտագործելիս կամ հրատարակելիս անհրաժեշտ է գտել այդպիսիք, սակայն արժեքավորն այն է, որ բառարանում զգալի թիվ են կազմում բարրառից հատուկ հետաքրքրություն ներկայացնող բառեր այսպես.

Սաբրլուկ — հղկված, սիմուր — լքացազանչության, ամլխտիլ — ճագուստին կտրտած մասը կտորով կարկտիլ, եթուկ — տեղյակ, իրազեկ, ամպակ — պետք եղածին չափ քաղցր չեղող օշարակ, բղող — երկայն մազերը սանրի երես չտեսնելուց առաջ եկած վիճակը, բուտ — զավակ, որդի, բուրիկ — անիծ, մանր ոչիլ, սնուկ — շատ գործածված: Բառարանը աղբատ չէ նաև յուրահատուկ ոճերով, այսպես՝ աչք, ականջ կարիլ խիստ ուշադիր ըլլալ. աչքի արդարյուղ — խիստ սիրելի, աչք ներկել — շողոթորթել և այլն:

Առաջին իսկ հայացքից երևում է, սակայն, որ բառարանը անավարտ է: Որոշ հնչյուններով սկսվող բառերի թիվը երբեմն չի անցնում մեկ տասնյակից. այսպես է վիճակը ե, գ, կ, լ, ը, ժ, ք և մի քանի այլ հնչյուններով սկսվող բառերին վերաբերող հատվածներում:

Սույն աշխատության մեջ հեղինակը անում է բարրառի քերականությանը, հնչյունափոխությանը, ինչպես նաև բառակազմությանն ու բառիմաստային փոփոխություններին վերաբերող դիտողություններ:

Իր տեսակի մեջ ուշագրավ է Նշան Գ. Խլրտյանի՝ մոտ 350 էջից բաղկացած «Համշենի հայոց գավառաբարառանը» աշխատությունը (Տրապիզոն, 1905):

Ձեռագրին նախորդող ընդարձակ առաջաբանը հետաքրքրական է նաև բարրառի տարածման շրջանի մասին տրվող պատմական, ինչպես նաև բնական վիճակին, անգամ ուլյեֆին վերաբերող դիտողություններով:

Աշխատությունը մյուսներից տարբերվում է իր «ֆերականական ուրվագծով», որն անհամեմատ հարուստ է: Խլրտյանը անդրադառնում է գրեթե բոլոր խոսքի մասերին: Բառարանը արժեքավոր է նաև նրանով, որ եթե մյուս բառարաններում, բարբառային բառերի հետ, տեղ են գտել նաև գրականից անցած, ինչպես նաև օտար լեզուներից փոխառված բառեր, սակայն Խլրտյանը աշխատել է հարազատ մնալ գավառական բառարան կազմելու սկզբունքներին:

Արժեքավորն այս ձեռագրի մեջ նաև այն է, որ հեղինակը հավաքել է համշենցիներին հատուկ, նրանց տնտեսական կացությանը բացահայտող տեքստեր՝ հեթաթներ, ավանդություններ, ծածկաբանություններ, երգումներ, խաղեր, երգեր, առակներ, ասացվածքներ, ոճեր և դարձվածքներ:

Այս ձեռագիրը, ինչպես և հատկապես Կարապետ բեյ Պեննեյանի՝ երկու հատորյան «Մելի-Պենեի հայոց գավառաբարառը» (1912), լեզվաբան-բարբառագետներից բացի մեծ նյութ կարող են տալ նաև բանահավաքին ու ազգագրագետին:

¹ Այս և նման գեպքերում պահպանված են ձեռագրերի հեղինակների ուղղագրությունը և գրելաձևը:

Այս երկրորդ աշխատության մեջ մանրամասնությամբ, ամբողջ առաջին հատորի մեջ (200 էջից ավելի) տրված է բարբառի տեղագրությունը, կանգուն ու կործանված հնություններն ու ամբությունները, գետերը, ջրերը, բարբառախոս հայերի տնտեսական վիճակը, բարբերուկահ-կարասին, տոները, սովորույթները, նույնիսկ կերակուրները:

Աշխատության երկրորդ հատորը դուռ բարբառագիտական արժեք է ներկայացնում:

... Սովնանյանի՝ «Էվերեկ-ձենեսեի հայոց գավառաբարբառ» իր մեջ ամփոփում է բարբառի «ծայնագիտությունը», քերականությունը, բառագիտությունը, ինչպես նաև ոճեր ու ասացվածքներ, մանրավեպեր, հանելուկներ և անեծքներ այս բարբառով: Այս աշխատության մեջ հեղինակը նշում է այն հետաքրքրաշարժ հանգամանքը, թե նույն գյուղաքաղաքի տարբեր թաղեր խոսում են նույն բարբառով, բայց իրարից շատ տարբեր են: Կասկած չի, չի կարող, որ բարբառին հատուկ խոսվածքների առկայությունը վերաբերող այս ակնարկը կարող է հատուկ ուսումնասիրության նյութ դառնալ:

Լ. Սրապյանի «Քղի Գուսպայի գավառային բառեր» (1898) վերնագիրը կրող ձեռագիր գործը, հեղինակի հայտարարության համաձայն, համեմատվել է Գափամաճյանի բառարանի հետ, որի հետևանքով բառարանում թողնվել են միայն այն բառերը, որոնք չկան այդ բառարանում: Թացի բառարանից, հեղինակը ներկայացրել է նաև նմուշներ:

Ձեռագրերի մեջ են նաև «Բառագրգույն Բաղելի առաջն. վիճակի», ինչպես նաև «Մշո գավառաբարբառի բառարանը»:

Այս երկու, գրեթե միարևույթ, աշխատությունները իրարից տարբերվում են միայն նրանով, որ առաջինում տրված են նաև մի քանի քերականական դիտողություններ, որոնք բացակայում են երկրորդում:

Այս երկու բառարանները ընդգրկում են հետաքրքրություն ներկայացնող բառեր, բառաձևեր, ոճեր ու դարձվածքներ, որոնք չկան մեր տպագիր բառարաններում:

Բավականին մեծածավալ է Ա. Բահաթրյանի «Ղարաբաղի գավառական բառագիրք» (1904): Աշխատությունը կցված առաջաբանից հայտնի է դառնում, որ հեղինակը դրա վրա աշխատել է մի քանի տասնամյակ:

Ես հույս չունեի, լսում է հեղինակը, որ այն որևէ հետաքրքրություն կներկայացնի, բայց անսկսկալ, ուսուցչական պաշտոնով մեր քաղաքումն էր Հր. Աճառյանը, որը խնդրեց իր տրամադրության տակ դնել բառագիրքը: Պարզվում է նաև, որ Աճառյանը բարձր կարծիք է հա տնել այդ բառարանի մասին և խմբագրել է այն:

Վերոհիշյալ ձեռագրերից իր բնույթով տարբերվում է Գ. Վանցյանի՝ «Փորձ-նախաճառ լեզվի բերականության» (1908) աշխատությունը: Ընդարձակ առաջաբանում հեղինակը արտահայտում է իր տեսակետները գրաբարի և բարբառների փոխհարաբերության մասին, որոնց մեծ մասը, այժմ արդեն, հայտնի է հայագիտությանը:

Ամփոփենք. Երևանի Մոյոտտովի անվան պետհամալսարանի գրադարանում պահվող վերոհիշյալ ձեռագրերը արժեքավոր են ամենից առաջ հայ բարբառագիտության, բարբառային բառարանների համար:

Նրանց մի մասը, ինչպես տեսանք այս համառոտ նկարագրությունից, վերաբերում է այնպիսի բարբառների, որոնք գեղեցիկ ուսումնասիրության կարիք են զգում: Այդպիսիք են Քղի, Էվերեկ-ձենեսեի, Մելիտինեի (Մալաթիա), Տերենտեի բարբառները:

Այն հանգամանքը, որ բառարաններում տեղ են գտել բարբառներին հատուկ այնպիսի բառեր և ոճեր, որոնք չկան մեր տպագիր բառարաններում, բարձրացնում է դրանց արժեքը և դրանք մեծ նյութ կարող են տալ բարբառային և ընդհանրապես հայ բառարանագրությանը:

Ձեռագրերում տեղ գտած արժեքավոր դիտողությունները այդ բարբառով խոսող հայերի կենցաղի, ապրելաձևի, սովորույթների մասին մեծ հետաքրքրություն կարող է ներկայացնել նաև ազգագրության համար:

Ս. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ